ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ

20.09.2023 14:23

ՀՀ փաստաբանների պալատը, որպես փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող կառույց, կարևորելով ժողովրդավարական հասարակությունում հավաքների ազատությունը, մշտապես հետևում է հավաքների մասնակիցների նկատմամբ հասարակական կարգի պահպանմանն ուղղված ուժային կառույցների կողմից դրսևորած վարքագծին:

Այս առումով, անհանգստացնող են հավաքների մասնակիցների ու ոստիկանների միջև արձանագրված բախումները:

Վերոգրյալով պայմանավորված՝ Փաստաբանների պալատն իր առաքելության շրջանակներում անվճար առաջին իրավաբանական օգնություն կտրամադրի հավաքներին մասնակցող և բերման ենթարկված անձանց:

Վերջիններս իրենց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջնային անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար, կարող են կապ հաստատել խմբի փաստաբանների հետ հետևյալ հեռախոսահամարով՝ 033-600-714:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ

Սիմոն Բաբայան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })